ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՀՀ ԷԵԲՊՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով կենտրոնախույս պոմպերի մասերի և թուջե արտադրանքի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան 07 մարտի 2019թ.

ժամը. 10:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Ա. Ջալադյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ) **Ա. Գևորգյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ) **Ն. Համբարձումյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ) **Բ. Եդիգարյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգի մասին

(Ս. Մելքոնյան)

1. Հաստատել գնահատող հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը՝
2. Հայտերի գնահատման մասին:
3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2. Հայտերի գնահատման մասին

(Ս. Մելքոնյան)

2.1 Հայտերի գնահատման մասին:

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց մասնակցի փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում «Բլոքչեյնհոստ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել և գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.2 Առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ:
Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Բլոքչեյնհոստ» ՍՊԸ-ին՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.3 Բանակցությունների վարման մասին:

Քանի որ 1-ին չափաբաժնի համար «Բլոքչեյնհոստ» ՍՊ ընկերության առաջարկած գինը գերազանցում է գնման հայտով նախատեսված նախահաշվային գինը, գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և մասնակցին հրավիրել բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

3.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Ս. Մելքոնյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:
2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել ներկայացնելու 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը:
3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել բանակցությունների վարման մասին ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Մելքոնյան

Անդամներ՝ _____ Ա. Ջալադյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

_____ Բ. Եդիգարյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ն. Նիկոլայան